ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԵՃԵՐ ԼՈՒԾՈՂ ԱՅԼ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները (այսուհետ՝ Կողմեր)
հիմնվելով Անկախ Պետությունների Համագործակցության 1993 թվականի հունվարի 22-ի Կանոնադրության, Տնտեսական միության ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի 24-ի Համաձայնագրի եւ Տնտեսական գործունեության հետ կապված վեճերի լուծման կարգի մասին 1992 թվականի մարտի 20-ի Համաձայնագրի վրա.
ձգտելով միջպետական համագործակցության հետագա զարգացմանը եւ Կողմերի տնտեսվարող սուբյեկտների միջեւ տնտեսական վեճերով փոխադարձ իրավական օգնության
ընդլայնմանը, որպես Համագործակցության շրջանակներում ազատ առեւտրի գոտու գործելու եւ տնտեսական կապերի ամրապնդման անհրաժեշտ պայման,
ելնելով մի պետության դատարանների որոշումների՝ մյուսի տարածքում կատարման ապահովման եւ տնտեսական վեճերի քննության ընթացքում տնտեսական օրենսդրության եւ դատավարական նորմերի կիրառման փորձի փոխանակման մեջ ջանքերի միավորման օբյեկտիվ պահանջից,
մեծ նշանակություն տալով տնտեսական օրենսդրության ներդաշնակեցման եւ դրա կիրառման գծով դատական պրակտիկայի հարցերի լուծման գործում համաձայնեցված մոտեցումներ մշակելու նպատակով համատեղ պարբերական հանդիպումների եւ դատարանների խորհրդակցությունների անցկացմանը.
գիտակցելով համագործակցության կազմակերպման ամրագրման կարեւորությունը դրա
կայուն զարգացման ապահովման համար,
համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը կազմավորում են բարձրագույն արբիտրաժային, տնտեսական եւ տնտեսության ոլորտում վեճեր լուծող այլ դատարանների նախագահների խորհուրդ (այսուհետ խորհուրդ):
Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Կանոնադրության հիման վրա, որը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրող Կողմերի՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:
Անհրաժեշտ ընթացակարգերն ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 3

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկելով ոչ ուշ, քան երեք ամիս առաջ:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերի ընդհանուր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ՝ առանձին արձանագրություններով

ձեւակերպված, որոնք ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագիրը բաց է այլ պետությունների միանալու համար եւ նրանց համար համարվում է ուժի մեջ մտած միանալու մասին համապատասխան ծանուցումն ավանդապահին փոխանցելու օրվանից:

Կատարված է Քիշնեւ քաղաքում 2002 թ. հոկտեմբերի 7-ին մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետություն կուղարկի դրա հաստատած պատճենը:

Համաձայնագիրը ստորագրել են Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը,
Մոլդովայի Հանրապետությունը (վերապահումով), Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը, Ուկրաինան:

Հավելված
Բարձրագույն արբիտրաժային,
տնտեսական եւ տնտեսության
ոլորտում վեճեր լուծող այլ
դատարանների նախագահների
խորհուրդ կազմակերպելու մասին
2002 թվականի հոկտեմբերի 7-Ի
Համաձայնագրի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն արբիտրաժային, տնտեսական եւ տնտեսական ոլորտում վեճեր լուծող այլ դատարանների նախագահների խորհրդի

ՀՈԴՎԱԾ 1

Բարձրագույն արբիտրաժային, տնտեսական եւ տնտեսության ոլորտում վեճեր լուծող այլ դատարանների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) կազմավորվում է արբիտրաժային, տնտեսական եւ տնտեսության ոլորտում վեճեր լուծող այլ դատարանների (այսուհետ՝ դատարաններ) միջեւ համագործակցության կազմակերպական
ապահովման համար, որոնց իրավասությունների մեջ է մտնում տնտեսական գործունեության իրականացման հետ կապված վեճերի լուծումը:

ՀՈԴՎԱԾ 2

Խորհրդի հիմնական գործառույթներն են տնտեսական վեճերի լուծման եւ տնտեսական օրենսդրության կիրառման բնագավառում իրավական տեղեկատվության ակտիվ
փոխանակման ապահովումը, այդ ոլորտում համաձայնեցված մոտեցումների եւ դիրքորոշումների մշակման նպատակով փոխադարձ խորհրդատվությունների անցկացումը՝
հետեւյալ հարցերով.

քաղաքացիական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին միջպետական պայմանագրերի կիրառման.

մի պետության դատարանների որոշումների՝ մյուս պետության տարածքում

կատարման,
պայմանավորվող պետությունների տնտեսական եւ դատավարական օրենսդրության ներդաշնակեցման եւ այդ օրենսդրության կիրառման փորձի փոխանակման.
դատարանների գործունեության կազմակերպման եւ փոխգործունեության կատարելագործման, համապատասխան միջազգային պայմանագրերի եւ համաձայնագրերի
մշակման:
Խորհուրդը անհրաժեշտության դեպքում Պետությունների ղեկավարների խորհրդին, Կառավարությունների ղեկավարների խորհրդին, Միջխորհրդարանական վեհաժողովին, ԱՊՀ
այլ մարմիններին ներկայացնում է առաջարկություններ միջպետական համագործակցության վերաբերյալ եւ տեղեկատվություն դատարանների փոխգործողության
եւ դրա կատարելագործման միջոցների մասին: Եթե տնտեսական օրենսդրության կիրառման խնդիրների քննարկման ընթացքում հարց է առաջանում դրա կատարելագործման
եւ մերձեցման անհրաժեշտության վերաբերյալ, ապա Խորհուրդը համապատասխան նյութերն ուղարկում է Համագործակցության մասնակից պետությունների Իրավական խորհրդատվական խորհրդի քննարկմանը:

ՀՈԴՎԱԾ 3

Խորհուրդը տարին մեկ անգամ հերթական նիստեր է անցկացնում՝ հետեւյալ նպատակներով.
նշված ոլորտում հրատապ իրավական խնդիրներով տեղեկատվության եւ խորհրդատվությունների փոխանակման.
փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող իրավական հարցերով համաձայնեցված դիրքորոշումների մշակման.
իրավական հարցերով հանձնարարականների պատրաստման եւ քննարկման.
դատարանների փոխգործողության կատարելագործմանն առնչվող առաջարկությունների, համաձայնագրերի եւ այլ փաստաթղթերի նախագծերի քննարկման:
Խորհրդի արտահերթ նիստեր կարող են գումարվել Խորհրդի մեկ կամ մի քանի անդամների նախաձեռնությամբ՝ Խորհրդի ընդհանուր կազմի ոչ պակաս, քան կեսի համաձայնությամբ: Յուրաքանչյուր այդպիսի նիստ, որպես կանոն անցկացվում է դրա անցկացումը նախաձեռնող պետությունում:
Եթե արտահերթ նիստի վերաբերյալ առաջարկությունը մտցվել է Խորհրդի մի քանի անդամների կողմից, ապա նրանք միմյանց միջեւ համաձայնեցնում են դրա անցկացման տեղի վերաբերյալ հարցը, որի մասին նշվում է նրանց առաջարկության մեջ:

ՀՈԴՎԱԾ 4

Խորհրդի անդամներ են համարվում Բարձրագույն արբիտրաժային, տնտեսական եւ տնտեսության ոլորտում վեճեր քննող այլ դատարանների նախագահների խորհուրդ կազմավորելու մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մասնակից պետությունների դատարանների նախագահները կամ նրանց պարտականությունները կատարող անձինք: Խորհրդի անդամը, որը չի կարող ներկայանալ Խորհրդի նիստին, իրավունք ունի այդ նիստին ուղարկել իր ներկայացուցչին՝ նրան օժտելով համապատասխան լիազորություններով:
Համաձայնագրի մասնակիցներ չհամարվող Համագործակցության մասնակից պետությունների դատարանների նախագահները Խորհրդի անդամների համաձայնությամբ
Խորհրդի նիստերին կարող են մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

ՀՈԴՎԱԾ 5

Պետությունների ղեկավարների Խորհրդի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մարմիններում նախագահության կարգի մասին 1999 թ. ապրիլի 2-ի որոշմանը համապատասխան՝ Խորհրդի նախագահն ընտրվում է Համաձայնագրի մասնակից պետությունների դատարանների նախագահների կողմից՝ Խորհրդի անդամների թվից՝ ռոտացիայի սկզբունքի հիման վրա, մեկ տարուց ոչ ավելի ժամանակով: Խորհրդի նախորդ եւ հաջորդ նախագահները համարվում են Խորհրդի համանախագահներ: Խորհրդի նախագահի ժամանակավոր բացակայության դեպքում նրա պարտականությունները դրվում են նրա համանախագահներից մեկի վրա:

Խորհրդի նախագահը կազմակերպում է Խորհրդի աշխատանքը, Խորհրդի մյուս անդամների համաձայնությամբ սահմանում է նիստի անցկացման ժամը, կազմում է նիստի օրակարգի նախագիծը, կազմում է նիստի օրակարգը, վարում է Խորհրդի նիստը, համակարգում է նյութերի հերթական նիստին նախապատրաստելը, անհրաժեշտության դեպքում ձեւավորում է գործադիր խումբ եւ ժամանակավոր հանձնաժողովներ եւ ղեկավարում դրանց աշխատանքը:

Նրա ղեկավարությամբ ընթացիկ աշխատանքը կատարում է Խորհրդի քարտուղարը, որին Նախագահը ներկայացնում է Խորհրդի հաստատման համար:

Խորհրդի նիստերը, որպես կանոն, անցկացվում են այն պետության տարածքում, որի դատարանի նախագահը ընտրվել է Խորհրդի Նախագահ: Խորհրդի նիստի նյութերը նրա անդամներին են ուղարկում ոչ ուշ, քան նիստից 30 օր առաջ: Խորհրդի անդամները փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնում են ոչ ուշ, քան նիստի բացումից 10 օր առաջ:

ՀՈԴՎԱԾ 6

Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է ԱՊՀ տնտեսական դատարանի նախագահը եւ կարող են ներկա լինել ԱՊՀ տնտեսական դատարանի անդամները, Համագործակցության այլ մարմինների ղեկավարները եւ ներկայացուցիչները, ինչպես նաեւ, Խորհրդի անդամների համաձայնությամբ, Համաձայնագրի մասնակիցներ չհամարվող պետությունների դատաիրավական մարմինների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

ՀՈԴՎԱԾ 7

Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումները, որպես կանոն, ընդունվում են միաձայնության հիման վրա եւ կրում են խորհրդատվական բնույթ: Խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավասու է հայտնելու այս կամ այն հարցի շուրջ շահագրգռված չլինելու մասին, որը չի կարող դիտվել իբրեւ արգելք որոշման ընդունման համար, ինչպես նաեւ տվյալ որոշմանը հետագայում նրա միանալու համար:

Ընթացակարգային հարցերի վերաբերյալ որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՈԴՎԱԾ 8

Որպես ամփոփող փաստաթղթեր՝ իր իրավասության մեջ մտնող հարցերով Խորհուրդն ընդունում է որոշումներ, հաղորդագրություններ (կոմյունիկե), հայտարարություններ, դիմումներ եւ հանձնարարականներ, ինչպես նաեւ հաստատում է

Խորհրդի աշխատակարգը:

Խորհրդի ընդունած փաստաթղթերը ստորագրվում են նիստին մասնակցած Խորհրդի անդամների կողմից, կամ, Խորհրդի հանձնարարությամբ, նրա Նախագահի կողմից, իսկ յուրաքանչյուր նիստի արդյունքում կազմված արձանագրությունները՝ Խորհրդի Նախագահի կողմից:

Նիստից հետո՝ 30 օրվա ընթացքում, նիստի նյութերը ուղարկվում են Խորհրդի անդամներին:

ՀՈԴՎԱԾ 9

Խորհրդի անդամների գործուղման ծախսերը կրում է ուղարկող Կողմը:

Խորհրդի նիստի անցկացման հետ կապված կազմակերպչական-տեխնիկական ծախսերը
կրում է այն պետությունը, որի տարածքում կազմակերպվում է նիստը:

ՀՈԴՎԱԾ 10

Խորհրդի աշխատանքային լեզու համարվում է ռուսերենը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել Բելառուսի Հանրապետության համար՝ 21.08.2003 թ., Ռուսաստանի Դաշնության համար՝ 21.08.2003 թ., Ղրղզստանի Հանրապետության համար՝ 21.08.2003 թ., Ղազախստանի Հանրապետության համար՝ 21.08.2003 թ., Տաջիկստանի Հանրապետության համար՝ 11.11.2004 թ., Ուկրաինայի համար՝ 1.05.2004 թ., Հայաստանի Հանրապետության համար՝ 8.12.2004 թ.: